ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՅԿ ԱՐԱՅԻ

Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2020

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

МКРТЧЯН АЙК АРАЕВИЧ

Проблемы уголовно-правовой защиты безопасности личности в Республике Армения в контексте судебно-правовых реформ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 - «Уголовное право и криминология, уголовно-исполнительное право»

Ереван-2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս.Շ. Ծաղիկյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա.Ս. Սեդրակյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. մայիսի 27-ին ժամը 16:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2020թ. ապրիլի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Степанян О.М.**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Цакигян С.Ш.**
кандидат юридических наук, доцент **Седракян А.С.**

Ведущая организация: **Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 27 мая 2020 года, в 16:00 часов, на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван, 0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ

Автореферат разослан 16 апреля 2020г.

Ученый секретарь специализированного совета
кандидат юридических наук **Дж. А. Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում հետհեղափոխության շրջանում անձի անվտանգության պահովման հիմնախնդրի բարձր նշանակությամբ: Անձի անվտանգության իրավական ապահովումը, այդ թվում քրեաիրավական պաշտպանությունը ենթադրում է պետական և իրավական կառուցակարգերի շրջանակում նրա իրավունքների ու ազատությունների ոչ միայն հարգում, այլև դրանց արդյունավետ և երաշխավորված պաշտպանություն: Այն ենթադրում է նաև, որ ոչ ոք չի կարող հանիրավի ենթարկվել որևէ պատասխանատվության: «Պատասխանատվության կիրառումը, - նշված է «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարության» մեջ, - պետք է հիմնված լինի բացառապես Սահմանադրության և օրենքների վրա...»:[1]

Անձի անվտանգության քրեաիրավական արդյունավետ և երաշխավորված պաշտպանությունը ենթադրում է նաև գործող քրեական օրենսդրության կատարելագործում և իրավակիրառ պրակտիկայի բարելավում: Այսպես, ՀՀ գործող քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 թվականին և հետագա տարիներին դրա նորմերի գիտական վերլուծությունը[2] և իրավակիրառ պրակտիկան բացահայտել են օրենսգրքում առկա բազմաթիվ թերություններ: Մինչ այժմ քրեական օրենսգրքում արդեն հարյուրից ավելի փոփոխություն ու լրացում է կատարվել: Սակայն այդ փոփոխությունների նպատակների տարբերությունը, միասնական հայեցակարգային մոտեցման բացակայությունը և կրիմինալոգիական հիմնավորվածության անտեսումը որոշ դեպքերում հանգեցրել են օրենսգրքում առկա հակասությունների ու թերությունների խորացմանը:[3] Փոփոխություններ են անհրաժեշտ ոչ միայն քրեաիրավական նորմերի բովանդակության առումով, այլև քրեական օրենսգրքի կառուցվածքային տեսանկյունից: Ժամանակակից պայմաններին համահունչ քրեական օրենսդրության մշակման գործում հիմնական հայեցակարգային մոտեցումներից մեկը պետք է դառնա անձի անվտանգության պաշտպանության երաշխիքների ու կառուցակարգերի ամրագրումը՝

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ № 74 (1527) 25.10.19, էջ 23:

[2] Տե՛ս **Аветисян С. С.** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, էջ 23-308:

[3] Տե՛ս ՀՀՊՏ № 74 (1527) 25.10.19, էջ 46:

գիտական և կիրառական հիմնավորվածության տեսանկյունից: Անձի անվտանգության ապահովման և դրա քրեաիրավական պաշտպանության միջոցների կատարելագործման հետ կապված հիմնախնդիրների գիտական հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետությունում հանցավորության դինամիկ աճի հանգամանքով[4], նոր քրեական օրենսգրքի հայեցակարգով և մշակված որակապես նոր նախագծով: Վերը նշվածով է պայմանավորվում թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության վիճակը. Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության միջոցների հիմնախնդիրները շոշափվել են հայրենական գիտնականների՝ Ս. Ս. Ավետիսյանի[5], Ա. Մ. Խաչատուրյանի[6], Ա. Ա. Թամազյանի[7], Ս. Շ. Ծաղիկյանի[8], Լ. Զ. Թադևոսյանի[9], Ա. Ս. Սեդրակյանի[10] և այլոց աշխատություններում:

Հայրենական քրեագիտության մեջ «անձի անվտանգության» հայեցակարգի գիտականորեն հիմնավորված մշակումը ներկայացրել է Ս. Ս Ավետիսյանը՝ իր հիմնարար աշխատություններում:

Նշված խնդրին անդրադարձ է կատարել նաև Ա. Մ. Խաչատուրյանը՝ իր դոկտորական ատենախոսությունում և աշխատանքում նշված մենագրությունում, որոնցում ներկայացված է հանցավորության դեմ պայքարի միասնական տեսությունը և հեղինակային հայեցակարգը:

Ա. Ա. Թամազյանը անձի անվտանգության հարցերը ուսումնասիրել է կյանքի դեմ

---

[4] Այսպես 2018 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է հանցագործության 22551 դեպք, ինչը 2267 դեպքով կամ 11,4%-ով ավելի է, քան 2017 թվականին արձանագրված դեպքերի թիվը (20284) (Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 16 փետրվարի 2019, թիվ 27 (7011)):

[5] Տե՛ս **Аветисян С. С.** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, նույնի՝ Проблемы разграничения преступного от непреступного поведения (теория и практика уголовно-правового обеспечения безопасности человека). Ереван, 2011:

[6] Տե՛ս **Խաչատուրյան Ա. Մ.** Հայաստանի Հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի միասնական տեսության մշակման հիմնախնդիրները: Երևան, 2018:

[7] Տե՛ս **Թամազյան Ա. Ա.** Ծանրացնող հանգամանքներում կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները: Երևան, 2010:

[8] Տե՛ս **Цагикян С. Ш.** Противодействие коррупции в Армении. СПб., 2006:

[9] Տե՛ս **Թադևոսյան Լ. Զ.** Չավարտված հանցավոր գործունեության համար քրեական պատասխանատվության հիմնահարցը: Երևան, 2007:

[10] Տե՛ս **Սեդրակյան Ա. Ս.** Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը (իրավական նորմերի ժողովածու): Երևան, 2016:

ուղղված հանցագործությունների (սպանությունների) համատեքստում՝ իր դոկտորական ատենախոսությունում և մի շարք մենագրություններում:

Ս. Շ Ծաղիկյանը քննարկվող հիմնախնդիրը ուսումնասիրել է կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից, քանզի կոռուպցիան ուղղված է անձի, հասարակության և պետության անվտանգության դեմ:

Լ. Զ. Թադևոսյանն իր հիմնարար բնույթի աշխատություններում անձի իրավական անվտանգությունը շոշափում է չավարտված հանցագործությունների համար քրեական իրավունքի պատասխանատվության տեսանկյունից:

Իրավագիտության թեկնածու, դոցենտ Ա. Ս. Սեդրակյանի աշխատասիրությամբ կազմվել է ազգային անվտանգության վերաբերյալ իրավական ակտերի ժողովածուն, որոնցում շոշափվում է նաև անձի իրավական անվտանգության հետ կապված օրենսդրական կարգավորումները: Հեղինակը համալիր հետազոտություն է կատարել նաև ռազմական անվտանգության քրեաիրավական ապահովման առնչությամբ:

Ժամանակակից փուլում անձի անվտանգության ընդհանուր տեսական հարցերը հետազոտված են նաև ռուս գիտնականներ Ա. Ա Տեր-Ակոպովի, Ս. Ս. Ալեքսևի, Վ. Ս. Աֆանասևի, Ս. Ն. Բրատուսի, Վ. Վ. Լազարևի, Վ. Դ. Լուկաշևի, Վ. Մ. Կորելսկու, Ն. Ի. Մատուզովի, Վ. Ս. Ներսեսյանցի, Վ. Դ. Պերեվալովի և այլոց աշխատություններում: Հավուր պատշաճի գնահատելով վերոնշված գիտնականների ներդրումը անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության խնդիրների լուծման գործում, այդուհանդերձ գտնում ենք, որ հասարակական զարգացումների արդի պայմաններում խիստ կարևորվում է անձի անվտանգության իրավական ապահովման և քրեաիրավական պաշտպանության հարցերի գիտական ուսումնասիրությունը սահմանադրական, դատաիրավական և քրեաիրավական բարեփոխումների համատեքստում:

Հետազոտության օբյեկտն է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրները:

Հետազոտության առարկան է քրեաիրավական նորմերի համակցությունը, որը ձևավորում է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության միջոցների համակարգը և պրակտիայում դրանց կատարելագործման հետ կապված հարցերը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Սույն հետազոտության նպատակն է բացահայտել անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության առկա

հիմնախնդիրները և մշակել գիտականորեն հիմնավորված տեսական ու կիրառական առաջարկություններ գործող քրեական օրենսդրությունը կաւտարելագործելու և իրավակիրառ պրակտիկան բարելավելու համար:

Սույն նպատակին հետամուտ, հեղինակը առաջադրել է հետևյալ **խնդիրների** լուծումը՝

– բացահայտել անձի անվտանգության որպես իրավական կատեգորիայի էությունն ու բովանդակությունը,

– իրավակիրառ պրակտիկայի վերլուծության արդյունքների հիման վրա ներկայացնել կոնկրետ առաջարկություններ պրակտիկայի բարելավման ուղղությամբ,

– հիմնավորված ու փաստարկված առաջարկություններ ներկայացնել գործող քրեական օրենսդրության կատարելագործման համար, որոնք համահունչ կլինեն դատական և իրավական բարեփոխումների ելակետային դրույթներին,

– գիտականորեն հիմնավորել ինքնապաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունը՝ որպես մարդու անվտանգության ապահովման համապարփակ իրավաբանական գործիքակազմ:

Հետազոտության նորմատիվ հենք են կազմել միջազգային-իրավական ակտերը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը /1948թ./, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը /1966թ./, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտը /1966թ./, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիան /1950թ/, ՀՀ Սահմանադրությունը 2015թ. փոփոխություններով, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծը, «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» Կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի № 1441-Լ որոշումը, «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության 3 հոկտեմբերի 2019 թվականի № 1332-Ն որոշումը, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը (07.02.2007թ.) և այլ պաշտոնական փաստաթղթեր:

Հետազոտության տեսական հիմքը կազմել են պետության և իրավունքի տեսության, սահմանադրական և քրեական իրավունքի, քրեագիտության, փիլիսոփայության,

հասարակագիտության, հոգեբանության և հետազոտվող հիմնախնդրին վերաբերվող գիտության այլ ոլորտների գծով գիտական աշխատությունները, հայեցակարգերը և վերլուծական նյութերը:

Ատենախոսության էմպիրիկ հենքը ներկայացված են ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, որոնցում շոշափվում են «իրավական անվտանգության» հասկացութային բառակապակցությունը, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և դատական պրակտիկայի նյութերը, ինչպես նաև հանցավորության վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Նորմատիվ ու տեսական աղբյուրների լայն շրջանակի ընդհանրացումը պահանջել է գիտական ճանաչողության մեթոդների բազմամակարդակ համալիրի կիրառում: Աշխատության հիմքում ընկած է դիալեկտիկական մեթոդը՝ դրան հատուկ օբյեկտիվության, բազմակողմանիության, համադրության և ճանաչողության հստակության պահանջներով: Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև մասնավոր գիտական մեթոդներ՝ համակարգային, համեմատական-իրավական և ձևական իրավաբանական վերլուծության մեթոդները: Հետազոտության մեջ լայնորեն կիրառվել են ընդհանուր տրամաբանական մեթոդներն ու հնարքները՝ սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, անալոգիա:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ մենագրության մակարդակով իրականացվել է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների համալիր ուսումնասիրություն, որում համակողմանի վերլուծության են ենթարկվել «անձի իրավական անվտանգություն» և «անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանություն» կատեգորիաները, վեր են հանվել դրանց էական և բնութագրական առանձնահատկությունները, մշակվել է հեղինակային հայեցակարգ՝ անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության, գործող քրեական օրենսդրության նորմերի բովանդակային փոփոխությունների և քրեական օրենսգրքի կառուցվածքային մոտեցումների վերաբերյալ: Բացի դրանից, աշխատանքում «անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանություն» կատեգորիան հեղինակը դիտարկում է որպես ներքուստ փոխկապված քրեաիրավական հարաբերությունների և միջոցների միասնական ու ամբողջական համակարգ:

Վերոնշյալին համապատասխան հիմնավորվում է նաև գործող քրեական օրենսգրքի

արմատական վերանայում, ըստ որի՝ նոր քրեական օրենսդրության կառուցակարգային համակարգում գերապատվությունը անձի անվտանգության ապահովման ինստիտուտն է և քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերի նորմերը պետք է ծառայեն առաջին հերթին այդ ինստիտուտի իրավակարգավորմանը:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթներում.

1. Անձի անվտանգությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ինքնավար իրավական ինստիտուտ, որը երաշխավորում է անձի անվտանգ կեցությունը, նրա կայուն ու բնական զարգացումը: Անձի անվտանգությունն իրական և իրավական վիճակ է իրավահարաբերությունների ոլորտում, ըստ այդմ՝ անձի իրավական անվտանգության օբյեկտը նրա կյանքն է և առողջությունը (ֆիզիկական և հոգեբանական), իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, որոնք առաջանում են այդ իրավահարաբերություններից:

2. Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանությունը քրեական իրավունքի սկզբունքների և նորմերի հիմնական գործառույթն է, ինչպես նաև դատական և իրավապահ մարմինների, պետության քրեական քաղաքականության հիմնական նպատակն է:

3. Անձի անվտանգությունն իրավական առումով իրենից ներկայացնում է ոչ միայն նրա իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված իրավական նորմերի համակցություն, այլև երաշխավորված պաշտպանվածություն հանցավոր ոտնձգություններից: Այս առումով՝ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներն աշխատանքում դիտարկվում են որպես անձի պաշտպանությանն ուղղված առաջնային սուբյեկտիվ իրավունքներ:

4. Աշխատանքում հեղինակն առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել քրեական պատասխանատվությունը բացառող հետևյալ նոր հանգամանքները, որոնք կատարվել են իրավաչափության սահմաններում.

- «Իրավական ակտի կամ այլ պարտավորության կատարումը,
- Ուժի և զենքի օրինական կիրառումը,
- Հանցագործությունների կանխարգելման կամ բացահայտման գծով առաջադրանքի կատարման ժամանակ վնաս հասցնելը,

- Մասնագիտական պարտավորությունների ողջամիտ կատարումը»:

Նշված հանգամանքների ներմուծման արդյունքում հեղինակի կարծիքով, հանվելու են ժամանակակից քրեական իրավունքի բազմաթիվ հիմնախնդիրները, օպտիմալ եղանակով լուծվելու են իրավակիրառական պրակտիկայում մշտապես առաջացող գործնական հարցերը:

5. Աշխատանքում առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի ողջ համակարգի ձևափոխում՝ կենտրոնում դիտելով անձի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը: Անձի անվտանգության տեսանկյունից ֆիզիկական կամ հոգեբանական ներգործության ժամանակ հանցագործության հիմնական օբյեկտ պետք է ճանաչվի անձի կյանքն ու առողջությունը, իսկ այլ օբյեկտները, այդ թվում անձի պաշտպանությանն առնչվող հասարակական հարաբերությունները պետք է դիտարկել որպես լրացուցիչ օբյեկտներ: Դրանով կապահովվի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված. «մարդը, նրա կյանքն ու արժանապատվությունը բարձրագույն արժեքներ են» իրավադրույթի գործնական նշանակությունը:

6. Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության տեսանկյունից ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի նորմերը և հայեցակարգային դրույթները պետք է դիտարկվեն իրավունքի արժեքանության առումով՝ իբրև սոցիալ-իրավական պատշաճ վարքագծի օրինակելի և իմպերատիվ կանոններ:

7. Քրեաիրավական և քրեաբանական միջոցներով անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովումը պետք է դիտարկել իբրև նոր Քրեական օրենսգրքի նախագծի և հայեցակարգային մոտեցումների հիմնական խնդիր: Ընդ որում խոսքը գնում է ինչպես հանցավոր ոտնձգություններից պաշտպանության, այնպես էլ իշխանության անօրինական գործողություններից անձի անվտանգության ապահովման մասին:

8. Անձի անվտանգության ապահովման տեսանկյունից, առաջարկում ենք գործող ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ («Անհրաժեշտ պաշտպանությունը») հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Քրեական պատասխանատվության և պատժի ենթակա չէ այն անձը, ով իր գործողությամբ չեզոքացրել կամ վնաս է պատճառել արտաքին հարձակումից կամ իրական սպառնալիքից՝ հակաիրավական ոտնձգություն կատարողին՝ իր կամ այլոց անվտանգությունը (կյանքը, առողջությունը, իրավունքները,

ազատությունները, օրինական շահերը), հանրային կամ պետական շահերը պաշտպանելիս: Դա յուրաքանչյուր անձի անհրաժեշտ պաշտպանության բնական, արդարացի և օրինական իրավունքն է»:

Անհրաժեշտ պաշտպանությունը պատիժ կամ ինքնադատաստան չէ: Այն սոսկ իրավական շահերի պաշտպանության միջոց է: Ուստի ոտնձգողին վնաս պատճառելու իրավաչափությունը որոշվում է ոտնձգության օբյեկտիվ վտանգավորությամբ, այլ ոչ թե հարձակվողի սուբյեկտիվ վիճակով:

9. Հանրորեն վտանգավոր ոտնձգությունը, որի առկայությունն անհրաժեշտ պաշտպանության պայմաններից մեկն է, արտահայտվում է մարդու որոշակի վարքագծի՝ արարքի մեջ: Հանցավոր արարքը արտաքին աշխարհում մարդու վարքագծի հանրորեն վտանգավոր, հակաօրինական, գիտակցական, ակտիվ (գործողություն) կամ պասիվ (անգործություն) դրսևորումն է, որը վնաս է պատճառում հասարակական հարաբերություններին: Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել ոտնձգության ենթակա անձի (պաշտպանվողի) գործողությունների իրավաչափության սահմանների որոշումը ոչ միայն իրավական ձևակերպումների մեջ, այլև ավելի լայն՝ ողջամտության և բանականության տեսանկյունից: Հեղինակի կարծիքով՝ իրավաչափության սահմաններում է գործում «պաշտպանվողը», եթե կոնկրետ իրադարձությունում նրա գործողությունները (հասցված վնասը, առաջինն ինքը հարված հասցնելու պահը, վտանգավորության սուբյեկտիվ ընկալումը) բավարարում են նաև ողջամտության (բանականության) ընկալմանը տվյալ իրավիճակում, երբ «պաշտպանվողը» գիտակցում է իր վարքագծի ողջամիտ (բանական) լինելը:

10. Նույն նպատակից ելնելով՝ առաջարկվում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Քրեական պատասխանատվության և պատժի ենթակա չէ այն անձը, ով իր գործողությամբ չեզոքացրել կամ վերացրել է իր կամ այլ անձի (անձանց) անվտանգությանը, հանրային կամ պետական շահերին անմիջականորեն սպառնող վտանգը, եթե հնարավոր չէր այն իրականացնել այլ օրինական կամ ողջամիտ եղանակով»:

Հետազոտության տեսական նշանակությունը նրանում է, որ այն իր հերթին կարող է տեսական հիմք հանդիսանալ հետագա ուսումնասիրողների համար, նոր քրեական

օրենսգրքի նախագծի նորմերի և հայեցակարգի դրույթների մշակման և դրանց հիմնավորման համար: Այն կարող է նպաստել նաև «անձի իրավական անվտանգության» կատեգորիայի տեսական հիմնավորումների և հայեցակարգային մոտեցումների համար:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքները, առաջարկությունները և հիմնադրույթները կարող են օգտագործվել «Քրեական իրավունք» դասընթացի և մասնագիտացված հատուկ առարկաների դասավանդման ժամանակ, ինչպես նաև անձի իրավական պաշտպանվածության հիմնախնդիրների ուսումնասիրության, քրեական օրենսդրության կատարելագործման և իրավակիրառ գործունեության բարելավման գործընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը. Ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ կայացել է նաև աշխատանքի քննարկումը և երաշխավորումը: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը. Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է դրված նպատակով և խնդիրներով: Ըստ այդմ էլ աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, յոթ ենթագլխից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը.

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Անձի անվտանգության հիմնախնդիրը քրեական իրավունքի տեսությունում»** վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Անձի անվտանգությունը որպես ընդհանուր իրավական հասկացություն»** վերնագրով հեղինակը համակարգված վերլուծության է ենթարկել անձի անվտանգության բովանդակային էությունը իրավագիտության մեջ:

«Անձի անվտանգությունը»՝ իրավագիտության սկզբունքային հասկացություններից մեկն է: Ներկայումս աքսիոմատիկ կերպով է ընկալվում այն դրույթը, որ իսկապես իրավական պետության մեջ մարդն իրենից ներկայացնում է բարձրագույն սոցիալական արժեք, իսկ նրա անվտանգությունը՝ հասարակական զարգացման իմաստն ու նպատակը:

ՀՀ փոփոխված Սահմանադրությունը և ազգային օրենսդրությունը նախատեսում են անվտանգության հետևյալ տեսակները. պետական (ազգային) անվտանգություն, անձի անվտանգություն, տնտեսական անվտանգություն, տեղեկատվական անվտանգություն, իրավական անվտանգություն, հոգևոր անվտանգություն, էներգետիկ անվտանգություն, տրանսպորտային անվտանգություն, պարենային անվտանգություն, բնապահպանական անվտանգություն: Կենտրոնանալով անձի անվտանգության վրա, ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ մարդը բարձրագույն արժեք է և նրա իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Այս առումով հեղինակը նշում է, որ անձի անվտանգության ապահովումը պետության հիմնական պարտականություններից է և հանդիսանում է ազգային անվտանգության անքակտելի բաղադրիչը:

Հեղինակի կարծիքով, անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանությունը օրենքով սահմանված գործիքակազմ է, որն արտահայտում է անվտանգության հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաև երաշխավորում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանվածությանն ուղղված քրեաիրավական միջոցների իրագործմանը:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Անձի անվտանգության ապահովումը որպես քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի առաջնահերթ խնդիր՝ գլոբալացման պայմաններում և դատաիրավական բարեփոխումների համատեքստում»** վերնագրով, հեղինակը քրեական իրավունքի տեսության և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից դիտարկում է անձի անվտանգության ապահովումը որպես քրեական օրենսդրության իրագործման հիմնական առաքելություն: Այս տեսանկյունից հեղինակը գտնում է, որ դատաիրավական բարեփոխումների ռազմավարության, մասնավորապես քրեական և քրեական դատավարության

օրենսդրական փոփոխությունների հիմքում պետք է դրվի անձի անվտանգության ապահովման հայեցակարգային մոտեցումը:

Այդ ռազմավարության մեջ պետք է սահմանել անձի, հասարակության ու պետության՝ արտաքին ու ներքին սպառնալիքներից կենսական կարևորություն ունեցող շահերի պաշտպանվածության ապահովման առավել օպտիմալ և արդյունավետ եղանակներն ու գործիքակազմերը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արժեհամակարգը»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության նյութական արժեքները»** վերնագրով, հեղինակը՝ նախ առանձնացրել է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության ենթակա երկու ենթահամակարգերը՝ նյութական և հոգևոր, այնուհետև քննարկել է դրանց քրեաիրավական պաշտպանության առանձնահատկությունները: Նյութական արժեքների առումով առանձնացվել է մարդու կյանքն ու առողջությունը, իսկ որպես հոգևոր արժեքներ (քննարկվող խնդրի տեսանկյունից) դիտարկվել են անձի պատիվն ու արժանապատվությունը, բարի համբավն ու հեղինակությունը, հոգևոր ներաշխարհը:

Աշխատանքում հիմնավորվում է հեղինակային այն մոտեցումը, ըստ որի քրեաիրավական պաշտպանվածության օբյեկտների շարքում գերապատիվը մարդու կյանքն է և այս առումով, հեղինակը գտնում է, որ բոլոր դեպքերում (այդ թվում ավազակային հարձակման պարագայում) մարդու կյանքը չի կարող հանդես գալ որպես հարակից կամ երկրորդային օբյեկտ՝ անկախ ընդհանուր դիտավորության ուղղվածությունից:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հոգևոր արժեքները»** վերնագրով, հեղինակը համակողմանի քննարկել է հոգևոր արժեքների քրեաիրավական պաշտպանության առանձնահատկությունները, մասնավորապես սահմանադրորեն ամրագրված պատիվն ու արժանապատվությունը, անձնական ազատությունը և անձեռնմխելիության իրավունքը՝ դիտարկելով դրանք «բացարձակ» և «հարաբերական» իրավունքների տեսանկյունից;

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «**Անձի անվտանգության պաշտպանության միջոցների համակարգը քրեական իրավունքում**» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները որպես անձի անվտանգության ապահովման համալիր քրեաիրավական գործիքակազմ»** վերնագրով, հեղինակը անհրաժեշտ պաշտպանությունը դիտարկում է ոչ միայն օրենքով թույլատրված պաշտպանության միջոց, այլև որպես իրավական արժեք ու սոցիալական բարիք՝ իր և հասարակության համար: Այս առումով, հեղինակը անհրաժեշտ պաշտպանությունը համարում է անձի բացարձակ իրավունքը և նրա իրագործման (կամ չիրագործման) միակ սուբյեկտը՝ մարդու ինքնությունն է, նրա ազատ կամքն է: Այս առումով հեղինակն առաջարկում է անհրաժեշտ պաշտապնությունը դիտարկել որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, եթե այն իրագործվել է պոզիտիվ իրավունքի (քրեական օրենքի) և ողջախոհության սահմաններում:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը և ծայրահեղ անհրաժեշտությունը հեղինակը դիտարկում է որպես անձի անվտանգության ապահովմանն ուղղված ինքնավար ու արդյունավետ քրեաիրավական գործիքակազմ:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Անձի անվտանգության ապահովման համակարգում քրեական օրենսդրության սկզբունքների դերն ու նշանակությունը»** վերնագրով, հեղինակը իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութերի վերլուծության հիման վրա ներկայացնում է քրեական օրենսդրության սկզբունքների դերն ու նշանակությունը անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության խնդրում:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «**Անձի անվտանգության պաշտպանության քրեաիրավական միջոցների կատարելագործման հիմնախնդիրը դատաիրավական բարեփոխումների համատեքստում**» վերտառությամբ, հեղինակը ուրվագծում է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության կատարելագործման խնդիրը՝ դատաիրավական բարեփոխումների ռազմավարության համատեքստում:

Եզրակացություններ

1. Գործառնական նշանակության առումով անվտանգության իրավահարաբերություններն առաջարկվում է դասակարգել երեք խմբերի՝ 1) որոնք ստեղծում են անձի կենսական կարևորություն ունեցող շահերի՝ պոտենցիալ վտանգից պաշտպանվածության պայմանները, 2) անմիջականորեն ապահովում են դրանց պաշտպանությունը, 3) ուղղված են հասցված վնասի, սոցիալական արդարության և մարդու ոտնահարված իրավունքների ու ազատությունների վերականգմանը:

2. Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության համակարգում կարևորվում է մարդու հիմնական (սահմանադրական) իրավունքների ու ազատությունների պաշտպանության դերը: Դրանց սոցիալ-իրավական նշանակությունը դրսևորվում է նրանում, որ մարդը դրական և բնական իրավունքի ուժով՝ իր կամ երրորդ անձանց պաշտպանությունն իրականացնում է օրենքով պաշտպանվող այլ բարիքներին վնաս պատճառելու միջոցով: Այդ իրավունքի իրականացման հետևանքով առաջացող հարաբերությունները, նպատակահարմար է սահմանել իբրև ինքնապաշտպանության հարաբերություններ: Դրանք կրում են հարաբերական բնույթ և առաջանում են. 1) պաշտպանության սուբյեկտի և ոտնձգողի միջև՝ անհրաժեշտ պաշտպանության իրադրությունում և 2) պաշտպանության սուբյեկտի և երրորդ անձանց միջև՝ ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում:

3. Դատաիրավական բարեփոխումների ռազմավարության տեսանկյունից, ներկայումս անհրաժեշտություն է առաջացել ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի որակական փոփոխությունների անհրաժեշտությունը այն մտայնությամբ, որպեսզի մարդու կյանքն ու առողջությունը բոլոր դեպքերում ճանաչվեն որպես ոտնձգությունների հիմնական, առաջնային օբյեկտներ: Նման մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ քրեական օրենսդրության վերանայման հիմնական ուղղություններից պետք է լինի անձի, հասարակության և պետության անվտանգության երաշխավորված պաշտպանվածությունը:

4. Անձի անվտանգության ապահովման, նրա կենսական կարևոր շահերի (կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության, սեփականության) երաշխավորված պաշտպանության համար անհրաժեշտ է բարելավել նաև իրավակիրառ պրակտիկան, այն համապատասխանեցնելով ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին և միջազգային չափորոշիչներին:

5. Անձի անվտանգությունը, ի տարբերություն ազգային, պետական անվտանգության, բնութագրվում է երկակի առումով, կենսաբանական (կյանքի, առողջության ապահովումը) և սոցիալական (իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, պատվի և արժանապատվության ապահովումը): Երկու առումի բաժանելը խիստ պայմանական է, նախ՝ դրանք հանդես են գալիս որպես մեկ միասնական ամբողջական արժեհամակարգ, երկրորդ, առանց իրավունքների և ազատությունների, առանց պատվի և արժանապատվության մարդը կդադարի մարդ լինելուց, նա կկորցնի նաև իր կենսաբանական բնույթը, էությունը: Սակայն կենսաբանականի և սոցիալականի բաժանման պայմանականությունը, այդուհանդերձ՝ մարդու կյանքն ու առողջությունը քրեական օրենսդրության պաշտպանվածության տեսանկյունից առաջնային է և հիմնական:

6. Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանությունն իրենից ներկայացնում է նաև երկու փոխկապակցված ուղղությունների միասնություն՝ հանցագործությունների կանխարգելում և ոտնձգությամբ խախտված անձի իրավունքների ու ազատությունների վերականգնում: ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործությունների կանխարգելումն իրագործվում է՝ ա) արարքների քրեականացման (ապաքրեականացման) և քրեաիրավական արգելքների համակարգի կառուցման շրջանակներում, բ) քրեական պատասխանատվության սահմանման շրջանակներում, անձի անվտանգության պաշտպանությունն ուղղված քրեաիրավական հարաբերությունների գործընթացն ապահովվում է պատշաճ իրավական ընթացակարգերի միջոցով:

7. Անձի իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի, պատվի և արժանապատվության, սեփականության պաշտպանությունն անմիջականորեն ապահովվող հարաբերություններն առաջանում են անձի հիմնական իրավունքների ու ազատությունների, օրինական շահերի ոտնահարումով կամ դրանց խախտման իրական սպառնալիքի առաջացման իրավիճակում: Հասցված վնասի հետևանքները նվազագույնի հասցնելու, մարդու խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելուն ուղղված հարաբերությունները առաջանում են սոցիալական արդարության պահանջներին ուղղված պետության քրեական ու պատժողական քաղաքականության իրականացման արդյունքում:

8. Քրեական օրենսդրությունը երկար ժամանակ անմիջականորեն չէր տալիս այն չափանիշները, որոնցով հնարավոր լիներ հավաստել անհրաժեշտ պաշտպանության սահմանները կամ շրջանակները: Այդ չափանիշների մշակումը դատական պրակտիկայի և քրեական իրավունքի գիտության խնդիրն էր: Սակայն բոլոր դեպքերում ակնհայտ էր, որ անհրաժեշտ պաշտպանության ակտի օրինաչափության համար ըստ օրենքի չի պահանջվում լիակատար համամասնություն հանցագործին հասցվող վնասի և կանխվող վնասի միջև:

Հանցագործին հասցված վնասը՝ կանխված հնարավոր վնասի համեմատությամբ կարող է ավելի մեծ լինել: Այն պահանջը, թե անհրաժեշտ պաշտպանության դեպքում հանցագործին չպետք է ավելի մեծ վնաս պատճառել, զգալիորեն կհեշտացներ հանցագործությունների կատարումը և ըստ էության կնշանակեր անհրաժեշտ պաշտպանության իրավունքի վերացում: Դատական պրակտիկան և քրեական իրավունքի տեսությունը ելնում են նրանից, որ պաշտպանության ժամանակ օրինաչափության սահմանները պետք է որոշվեն հարձակման ինտենսիվությամբ և պաշտպանվող շահի բնույթով, որոնք ընդունելի և ընկալելի են ողջամտության և բանականության տեսանկյունից:

9. Անհրաժեշտ պաշտպանության ձևերը բազմազան են ու տարատեսակ: Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված գործերի քննության ժամանակ թույլ են տրվում սխալներ: Իրավակիրառ ոլորտում հաճախ գտնում են, որ հարձակման ենթարկված անձն իրավունք չունի ակտիվորեն պաշտպանվելու, եթե նա հնարավորություն ունի փրկվել փախուստով կամ դիմել որևէ մեկի, այդ թվում իշխանության մարմինների օգնությանը կամ ակտիվորեն հակազդելու փոխարեն ընտրել պաշտպանության այլ միջոցներ: Գործնականում դա նշանակում է, որ չի կարելի պաշտպանվել, եթե փախչելով փրկվելու հնարավորություն կա, կամ կարելի է դիմել քաղաքացիների ու իշխանության մարմինների օգնությանը: Այս առումով, աշխատանքում հիմնավորվում է այն տեսակետը, ըստ որի՝ իրավապահ մարմիններին դիմելու կամ փախչելով փրկվելու հնարավորությունը չի բացառում անհրաժեշտ պաշտպանության իրավունքի գործադրումը, քանզի անհրաժեշտ պաշտպանությունն, ըստ հեղինակի, մարդու բնական անօտարելի և սուբյեկտիվ իրավունքներից է, որի

իրականացումը կարող է միայն բարի համբավ բերել մարդուն՝ հասարակության օգտակարության տեսանկյունից նաև:

10. Անձի հոգեբանական անվտանգությունը սահմանվում է իբրև մարդու նորմալ հոգեվիճակի պաշտպանվածության վիճակ, որը բնութագրվում է ինչպես մարդու հոգեկանի նկատմամբ վտանգի բացակայությամբ, այն ներառում է նաև այդպիսի վտանգի վերացմանն ուղղված ողջամտության և բանականության տեսանկյունից գործադրվող միջոցների առկայությունը:

11. ՀՀ գործող օրենսգրքի կատարելագործման նպտակով առաջարկվում է նշված օրենսգրքի 8-րդ գլխում լրացնել 47[1] հոդված, հետևյալ բովանդակությամբ. «1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի վնաս պատճառել քրեական կամ այլ օրենքով պաշտպանվող շահերին՝ նպատակ ունենալով պաշտպանել իր կամ օրենքով պաշտպանվող այլ անձանց, հասարակության կամ պետության շահերը, եթե այդ նպատակին չէր կարելի հասնել այլ օրինական միջոցներով և թույլ չի տրված իրավունքի իրագործման և տվյալ իրավիճակում ողջամտության սահմանների անցում:

2. Իրավունքի իրականացման իրավաչափության սահմանների անցում է ճանաչվում այնպիսի վնասի դիտավորյալ պատճառումը, որն ակնհայտորեն չի համապատասխանում օրենքով թույլատրված վնասի վտանգի բնույթին ու աստիճանին և իրավունքի իրականացման հանգամանքներին: Այդպիսի գերազանցումը քրեական պատասխանատվություն է բերում միայն դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերում»:

12. Անձի իրավական անվտանգության կատեգորիան անխզելիորեն կապված է այլ իրավական կատեգորիաների՝ «իրավունքի ինստիտուտ», «իրավունքի հրաժարում», «իրավունքի գործառույթ», «իրավահարաբերությունների օբյեկտ», «իրավաբանական պատասխանատվություն», «օրենքի հետադարձ ուժ», «իրավական ռեժիմ», «իրավական մշակույթ» և այլ հարակից կատեգորիաների հետ և դրանց հետ հարաբերվում է փոխազդեցության, փոխպայմանավորվածության և փոխլրացման դինամիկ շարժման մեջ:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

ա) Մենագրություններ

1. Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Եվրոպրինտ, 2019, 147 էջ:

2. Անձի քրեաիրավական անվտանգության պաշտպանության միջոցների և օրենսդրության կատարելագործման հիմնախնդիրները: Երևան, Եվրոպրինտ, 135 էջ:

բ) Գիտական հոդվածներ

1. Անձի անվտանգության ապահովումը որպես քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի առաջնահերթություն // «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 108, 2018թ., էջ 9-13:

2. Անձի անվտանգության պաշտպանության քրեաիրավական ասպեկտները գլոբալացման պայմաններում // «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 105, 2018թ., էջ 8-11:

3. Ռեցիդիվը որպես հանցագործությունների բազմակիության տեսակ (համահեղինակ՝ Լ. Ա. Ղազանչյան) // «Կաճառ» գիտական տարեգիրը, 2017թ. էջ 82-88:

4. Անհրաժեշտ պաշտպանությունը որպես անձի անվտանգության ինքնապաշտպանության արդարացի և օրինական միջոց // «Դատական իշխանություն», Գիտագործնական ամսագիր, 2019թ., № 5-6 (239-240), էջ 59-65:

5. Проблемы совершенствования уголовного права и уголовного-правовой политики Республики Армении // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում» ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տարեկան գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018թ., էջ 416-421:

6. Անձի անվտանգության պաշտպանության միջոցների կատարելագործման հիմնախնդիրը արդի քրեական իրավունքի զարգացման տեսանկյունից // «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, № 113, 2019թ., էջ 17-21:

Резюме

Мкртчян Айк Араевич

Проблемы уголовно-правовой защиты безопасности личности в

Республике Армения в контексте судебно-правовых реформ

В данном диссертационном исследовании всесторонне и обстоятельно изучаются проблемные аспекты уголовно-правовой защиты безопасности личности.

По мнению автора диссертации правовая безопасность не существует изолированно, ее обеспечение зависит в конечном счете от безопасности личности. В последние годы, Армении пришлось решать ряд актуальных проблем, поскольку они прямо угрожали безопасности ее граждан. В числе таких проблем является уголовно-правовая защита безопасности личности. Уголовно-правовая безопасность личности может быть обеспечена лишь при наличии эффективно действующего уголовно-правового законодательства и правоприменительной практики. Однако формирующиеся в нашей стране общественные отношения в условиях рынка и становления правового демократического государства далеко не всегда учитываются уголовным законодательством и правоприменительной практикой.

В диссертационной работе дано определение уголовно-правовой безопасности личности – это система общественных отношений, урегулированных нормами уголовного права в целях обеспечения безопасности личности и общественного спокойства.

Кроме того, в данной диссертационной работе под безопасностью личности автор понимает систему внутренних и внешних условий, предотвращающую угрозу индивиду как представителю социума, в целях обеспечения его жизненно важных свойств личности, а также его прав и свобод.

Проблемы безопасности личности должны образовать основу стратегии уголовной политики Республики Армения во всех ее направлениях: уголовно-правовом, уголовно-процессуальном, уголовно-исполнительном, правоохранительном и др. В работе обосновывается вывод о том, что все направления уголовно-правовых реформ должны выделять проблему безопасности личности, сделать ее доминирующей в структуре стратегии судебно-правовых реформ.

Автор обосновывает положения о том, что актуальные проблемы уголовного права и уголовного законодательства, в контексте судебно-правовых реформ Армении, должны решаться с целью обеспечения юридической безопасности личности.

Научная новизна работы состоит в том, что данное исследование в определенном смысле дополняет сумму теоретико-практических работ о юридическом (уголовно-правовом) обеспечении защиты безопасности личности новыми концептуальными подходами. В частности, в работе обосновывается тезис о радикальном пересмотре структуры и содержания Уголовного Кодекса РА, в котором предлагается создать правовые конструкции и механизмы уголовно-правового регулирования института обеспечения юридической безопасности личности, как главнейшей задачи уголовного права и уголовно-правовой политики РА.

Анализ современной теории уголовного права, действующего уголовного законодательства и правоприменительной практики позволили автору прийти к выводу о том, что максимальное обеспечение безопасности личности от преступных посягательств должно являться одним из приоритетов стратегии судебно-правовых реформ РА, важным направлением развития уголовной политики государства.

Теоретическая значимость диссертации заключается в том, что сформулированные в нем концептуальные подходы и выводы развивают и дополняют наши знания о уголовно-правовой безопасности личности. Результаты работы могут использоваться в качестве теоретической базы для дальнейших исследовании.

Практическая значимость работы заключается в том, что содержащиеся в нем рекомендации и выводы могут найти практическое применение в правотворческой, правоприменительной и правоохранительной деятельности.

Материалы диссертационного исследования могут быть использованы также в учебном процессе по дисциплинам уголовного права и теории правовой безопасности личности.

Summary

Hayк Ara Mkrtchyan

Problems of criminal defense of personal security in Republic of Armenia in the context of judicial reforms

This dissertation study comprehensively and thoroughly examines the problematic aspects of the criminal law protection of personal security.

According to the author of the dissertation, legal security does not exist in isolation, its maintenance ultimately depends on the security of the individual, society, and the state as a whole. In recent years, Armenia has had to solve a number of urgent problems, since they directly threatened the security of its citizens. Among these problems is the criminal legal protection of personal security. Criminal legal security of an individual can be ensured only if there is an effective criminal law and law enforcement practice. However, the social relations that are forming in our country in the conditions of the market and the establishment of a legal democratic state are far from being always taken into account by criminal law and law enforcement practice.

To ensure the criminal legal security of an individual, it is necessary to operate effectively with a high level of criminal law and law enforcement practice.

In the dissertation, the definition of criminal legal security of the individual is formulated - this is a system of public relations regulated by criminal law in order to ensure personal safety and public peace. In addition, in this dissertation, by the security of the person, the author understands the system of internal and external conditions that prevents the threat of the individual as a representative of society, in order to ensure his/her vital personality traits, as well as his rights and freedoms.

The problems of personal security should form the basis of the strategy of the criminal policy of the Republic of Armenia in all its areas: criminal law, criminal procedure, penal enforcement, law enforcement, etc. The paper substantiates the conclusion that all areas of criminal law reform should highlight security problems personality, make it dominant in the structure of the judicial reform strategy.

Therefore, current issues of criminal law and criminal law in the context of judicial reform should be addressed in order to ensure the security of the individual.

The scientific originality of the work lies in the fact that this study in a certain sense supplements the sum of theoretical and practical legal (criminal law) works ensuring the protection of personal safety with new conceptual approaches. In particular, this work founded the thesis of a radical revision of the structure and content of the RA Criminal Code. The author offered to create constructions and mechanisms of criminal law regulation of the institute of ensuring legal security of an individual, as the main task of criminal law and criminal law policy of the Republic of Armenia.

The analysis of the modem theory of criminal law, existing criminal law and law enforcement practice allowed the author of this dissertation to conclude that maximizing the security of individuals against criminal attacks should be one of the priorities of the judicial reform strategy of the Republic of Armenia.

The theoretical significance of the thesis lies in the fact that the conceptual approaches formulated in it develop and supplement our knowledge of the criminal law security of an individual.

The practical significance of the work lies in the fact that the recommendations and conclusions contained therein can find practical application in law-making and law enforcement activities.

The materials of the dissertation research can also be used in the educational process on the discipline of criminal law and the theory of legal security of an individual.